ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր,

Ընդունեցեք Արցախի ժողովրդի և իշխանությունների շնորհավորանքներն ու բարեմաղթանքները Ձեր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առիթով:

Ցավալի է, որ Ձերդ Սրբության ընտրությունը համընկավ Հայաստանի Ազգային Ժողովում տեղի ունեցած արյունալի դեպքերի հետ, և մեր ժողովուրդը չկարողացավ անխառն ուրախությամբ հանձին Ձեզ ողջունելու Հայոց նորընտիր Հայրապետին:

Սակայն վստահ ենք, որ այսպիսի դժվարին պայմաններում սկսված Ձեր գահակալությունն իրապես օրհնաբեր է լինելու մեր Հայրենիքի ու ժողովրդի համար:

Լիահույս ենք, որ նոր պատասխանատվության ու ծանրության առջև Ձեր կամային ու կազմակերպչական ձիրքերը առավել արգասավոր են լինելու և առավելագույնս նպաստելու են Հայոց Եկեղեցու և պետականության ամրապնդմանն ու հզորացմանը: